



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



19 JUL 2013 *gp*

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ ՆՑ 8

*10p*

Ա. ԿՕԼԼՕՆՏԱՅ

# ՈՒՎՔԵՐ ԵՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ

Ե Ի

ԻՆՁ ԵՆ ՈՒԶՈՒՄ ՆՐԱՆՔ

ԹԱՐԳՄ.

ՈՒ ԴԱՇՏՈՅԵԱՆԻ

*3*



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ ՊՈԼԻԳԵՏՍԿԱՅԱ, 7 (2)  
1906

**Ո՞ՐՔԵՐ ԵՆ ՍՈՅՈՒՆ-ԳԼԽՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԻՐՁ ԵՆ ՈՒՋՈՒՄ ՆՐԱՆԸ**

Նազիւ թէ կարիք լինի խօսելու այն մասին, թէ կեանքը օրէցօր աւելի ու աւելի ծանրանում է նրանց համար, որոնք իրանց աշխատանքովն են ապրում. որ մի կողմից անում է ամբողջ ժողովրդի աղքատութիւնը, միւս կողմից—աւելանում է այն փոքրաթիւ անհասանելի անասելի շքեղութիւնն ու հարստութիւնը, որոնք ունեն սեփականութիւն, կապիտալ, գործարան, հողեր, սներ և այլն: Խանութները լիքն են ապրանքներով, այն ինչ ազդարնակութեան մեծամասնութիւնը մնում է համարեա առանց կօշիկի, ձմեռը—առանց տաք հագուստի. ալիւրի պահեստասանքում փչանում է կիտած հացը, իսկ մարդիկ քաղցից մեռնում են. փաշտի պահեստասանքը լիքն են փաշտերով, այն ինչ բանուորը մի կտոր փաշտ էլ չունի, որ իր վառարանը փառէ. կարածատիրոջ պողպարեր հողերը անմշակ են մնում, այն ինչ զիւղական բնատնիքը չունի այնքան հող, որտեղ կարո-

Типографія Н. Аганьянъ, Поллицейская, 7.



1-173/գր

զանայ իրան համար անհրաժեշտ հացի պաշարը ցանել: Գնալով աւելի վատանում է զրութիւնը: Հազարաւոր և տասնեակ հազարաւոր բանւորներ փչանում են ոչժից վեր, յաճախ մլասակար աշխատանքից և կեանքի ծանր պայմաններից, այն ինչ նրանք, որոնց համար աշխատում են այդ բանւորները— «տէրերը»—աւելի ու աւելի են լցնում իրանց զրուպանները: Որքան էլ բանւորը ուժասպառ լինի, որքան էլ նրա ձեռքերով հարստութիւն դիզւի, միւսնոյնն է, այդ բոլորի արդիւնքը կզնայ ոչ թէ նրա օգտին, ոչ թէ հասարակութեան օգտին, այլ կապիտալիստի մասնաւոր զրպանը: Հարկաւոր նաբերական յաճախակի ճզնաժամերը, երբ առեւտուրը կանգ է առնում, զործարաններն ու գնւօղները փակւում են, բանկերը անանկանում, սրահին թւով բանւորներ փողոց են շարոււում, քայքայւում են նաև մանր զործարանատէրերն ու առեւտրականները: Խոշոր կապիտալիստների համար այդ ճզնաժամերը սարսափելի չեն. նրանք ունեն պահեստի կապիտալ. նրանց համար այդ փոթորիկները ոչինչ են. նրանք նմանւում են անտառի հաստարմատ կաղնիներին— բարձրացաւ փոթորիկը, զլորեց մանր-մուկը ծառերին, իսկ հսկայ կաղնիները անշարժ կանգնած են, նրանք այժմ աւելի ազատ տարածութիւն ունեն իրանց շուրջը: Բայց ի հարկէ նոյնը չէ բանւորների, զիւրացիների և մանր արհեստաւորների համար, նր-

րանք այդ ճզնաժամերի միջոցին կորցնում են և այն փոքրիկ ունեցւածքը, որ նրանք ունէին: Իսկ ճզնաժամերը անխուստիելի են, քանի որ գոյութիւն ունեն ներկայ, այսպէս կոչւած, առեւտրա-կապիտալիստական կարգերը: Այժմ ոչ ոք հոգ չէ տանում այն մասին, թէ որ անլրանքից որքան սկէտք է պատրաստւի, որ բոլորին բաւականացնէ և աւելորդ սպարանք չմնայ: Իւրաքանչիւր ձեռնարկող արտադրում է իր սեփական ընկոյթ, պատմասխմաստութեամբ և հողում է միայն մի բանի մասին—որքան կարելի է շատ շահ ստանալ և աւելի շուտ հարստանալ, քան ուրիշները: Որևէ սպարանքի դիրք աւելացաւ—և անսայդ սպարանքը արտադրող բոլոր ձեռնարկողները ըշտասպում են մէկը միւսից աւելի արտադրել այդ սպարանքից: Իժար է հաշւել, թէ այդ ամբողջ սպարանքը սպառողներ կլինեն, թէ ոչ: Եւ եթէ դուրս է դալիս, որ այդ սպարանքից պատրաստւած է չափազանց շատ և նրան զնոց չկայ, այն ժամանակ նրա դիրք ընկնում է, սպառումը սրահատւում, սկսւում է («ճզնաժամ») կամ ուրիշ խօսքով առեւտուրը («կանգ է առնում»):

Որքան էլ աշխատի մարդ, միւսնոյնն է մարդկութիւնը չի կարող խուստիել այդ ճզնաժամերից, միշտ տեղի կունենայ այն, որ շուկան լցւում է մի որևէ սպարանքով այն ժամանակ, երբ մի ուրիշ, ոչ պակաս անհրաժեշտ անլրանքի պակասութիւն և թանկու-

Թիւն է տիրում այդ շուկայում—այդ բոլորը կշարունակւի քանի որ արտադրութեամբ պարսպողները մի նպատակ միայն ունեն—հարստանալ, քանի որ այդ արտադրութեան ղեկավարը ինքը հասարակութիւնը չի լինի, քանի որ արտադրութեան նպատակը կլինի չարչիօութիւնը և ոչ թէ ժողովրդի պահանջներին բաւարարութիւն տալու ձգտումը:

Փամանակակից պայծամների անկատարելութիւնները չեն կարող աչքի չընկնել: Մարդիկ շատ վաղուց միջոցներ էին փնտրում ներկայ կարգերը փոխելու, կեանքը աւելի լաւ և արդար դարձնելու համար: Նրանցից ամեն միկը իրան միջոցն էր առաջարկում, մէկն ասում էր—պէտք է խլել ունեւոր դասակարգերի ամբողջ հարստութիւնը և բաժանել աղքատներին: Բայց բանից դուրս էր դալիս, որ այդ միջոցը անպէտք է, եթէ չասենք այն, որ այդպիսի բաժանմամբ, երբ չունեւորների թիւը հարիւրաւոր անգամ աւելի շատ էր ունեւորների թւից, ամեն մէկին ուրեմն պիտի հասներ այդ հարստութիւններից մի ամենաչնչին մաս, հէնց ինքը բաժանումը անկարելի է: Եթէ արդար արժէքով բաժանելու լինէին, մէկին կարող էր ընկնել քաթան, իսկ միւսին գործարանի ծրխներոյցը, մէկին դութան, միւսին հող և այլն: Այդպիսով մարդիկ իսկոյն ևեթ կսկսէին փոխանակել միմեանց հետ իրանց ստացածը, այսինքն նորից կրկնէին առևտուր. ամեն մէկը կձգտեր աւելի թանկ

վաճառել, աւելի շահ ստանալու համար: Կարն ժամանակում նորից կանէր անհաւասարութիւնը. նորից մէկը, որ աւելի աչքաբաց է, կունենար կարողութիւն, կապիտալ, իսկ միւսը ոչինչ, բացի իր աշխատող ձեռքերից:

Ուրիշները իրանց ամբողջ յոյսը դնում էին երկրի կառավարութեան, օրէնքների վրայ. բայց որքան էլ ինքնըստինքեան լաւ օրէնքներ լինէին, միևնոյնն է, հարստութիւնն ու աղքատութիւնը ոչնչացնել չէին կարող: Պետական ղեկավարատական կազմը, ճիշտ է շատ է թեթեւացնում կեանքը, նա միջոց է լաւ ապագայի հասնելու համար, բայց քանի որ ամբողջ հասարակութիւնը բաժանւած է երկու դասակարգերի— ունեւորների կամ բուրժուանների և չունեւորների կամ պրօլետարների, միմիայն օրէնքներով չի կարելի վերացնել այն չարիքը, որ տիրում է մեր օրերում:

Եղան, վերջապէս և ուրիշ մարդիկ, որոնք ճիշտ հասկացան թէ որտեղ է չարիքի արմատը, մարդիկ որոնք ինչպէս են այժմեան սոցիալ-ղեկավարաները, ասում էին, որ հարստութիւնն ու աղքատութիւնը վերացնելու, մարդկանց մէջ դասակարգային անհաւասարութեանը վերջ դնելու համար, որպէս զի ոչ որ չկարողանալ ուրիշի հաշուով հարստանալ և ամբողջ մարդկութիւնը ազատւի սովից, ճգնաժամներից, գործադրկութիւնից, քայքայումից, հարկաւոր է ոչնչացնել ծասնաւոր սեփականութիւնը և

ամբողջ հողն ու զիղւած հարստութիւնը գործարանները, խանութները, հանքերը, և այլն զարձնել հասարակական սեփականութիւն: Եթէ ամեն ոք կարողանար օգտուել իր արհեստին հարկաւոր գործիքներով և մեքենաներով, եթէ երկրագործը կարողանար ձենենայ իրան համար անհրաժեշտ հողը, այն ժամանակ ոչ ոք չէր հարստանայ ուրիշի աշխատանքով և անկարելի կըստնար ուրիշի աշխատանքից, օգտուելը, այն շահագործութիւնը, որ մենք այժմ տեսնում ենք ներկայ աշխարհում ամանց ձեռքում գտնուած է կապիտալը, գործարանը, հողը, այսինքն արտադրութեան միջոցները, այն ինչ մնացած անհրաժիմ մեծամասնութիւնը ունի միմիայն բանւորական ոյժ: Մի կերպ զոյուցիւն պահպանելով համար հարկաւոր է աշխատել, իսկ աշխատելու համար նրանք չունեն ոչ գործիք և ոչ նիւթ. նրանք ստիպւած գրնում են կապիտալիստ սեփականատիրոջ մօտ և վարձրւում են նրան: Իսկ ինչ է նշանակում վարձելը: Այդ նշանակում է վաճառել իր բանւորական ոյժը, աշխատող ձեռքերը գործատիրոջը այնպիսի գրնտի որ բաւական է միայն քաղցից չմեռնելու համար: Իսկ գործատերը վարձելով բանւորին կապէկներով, ստիպում է նրան բուրիներին սպարանք պատրաստել իր համար. գործատերը որքան քիչ է վճարում բանւորին և որքան շատ է աշխատեցնում նրան, այնքան բարձրանում է իրան վատասկը, այնքան արագ է

անում նրա կապիտալը: Բնւորը սկսում է կուլել, բայց կապիտալիստը այնքան էլ բանի տեղ չէ դնում նրան իսկոյն արժակում է և նրա տեղը նորը վարձում. աշխատանք որոնող պրօլետարներ, փառք Աստուծոյ միշտ շատ կան շուկայում:

Որովհետև մարդկանց անհատասարութիւնը, շահագործումը և այլն հնարաւոր են դառնում միմիայն հէնց մասնաւոր սեփականութեան շնորհիւ, այդպատեամով մարդկային կեանքը բարելաւելու համար ամենից առաջ հարկաւոր է բոլոր հողերը, գործարանները, արհեստանոցները և կապիտալները, մասնաւոր կալւածատէրերի, գործարանատէրերի և այլն ձեռքից առնել և յունձնել ամբողջ հասարակութեան, այսինքն իրանց բանւորների ձեռքը: Իսկ այն ժամանակ այդ բանւորները այլևս չեն լինի ներկայիս վարձու բանւորները, որոնք իրանց բանւորական ոյժը վաճառքի հանելով՝ ճորտագրւում են կապիտալիստին, ողջ կլինեն սոցաւ աշխատող—քաղաքացիներ, որոնք իրանք աշխատելով, իրոնք էլ կկարգադրեն արտադրած հարստութիւնը և իրանք էլ կկարողանան կառավարել իրանց հայրենի երկրի ամբողջ կեանքը: Մասնաւոր անտեսութիւններին պէտք է փոխարինել մէկ ընդհանուր ահադին ժողովրդական տնտեսութիւն հիմնւած միաձոյլ ընկերական (հասարակականացրած) աշխատանքի վրայ: Միմիայն այն ժամանակ, այդ տեսակ նոր կօմմունիստական կամ սօցիալիստական

դրում է ոչ թէ սպառելու, այլ վաճառելու  
համար: Նրանցից ամեն մէկը հոգում է ոչ թէ հա-  
սարակութեան օգտի, այլ իր զրպանի շահի համար,  
այդտեղից էլ ծագում է այդ մրցութիւնն ու թրջ-  
նամութիւնը մարդկանց մէջ: Կօմմունիստական հա-  
սարակութեան մէջ տեղ չեն ունենայ ոչ մրցութիւնը  
և ոչ շարժիութիւնը, որովհետև մարդիկ կարտադրեն  
ոչ թէ վաճառելու, այլ իրանց սեփական սպառման  
համար: Սակեր, ինչ որ կարտադրուի, կհամարուի հա-

տելու են բոլորը, այլ պատճառով ամեն մէկին աշ-  
խատանքի քիչ բաժին կրնկնի: Իրան կօղնեն և մե-  
քենաները, որոնք մեծ չափերով դորձածութիւն կը-  
դանեն, և դիտութիւնը, որի օղնութեամբ մարդու  
իշխանութիւնը բնութեան վրայ աւելի կմեծանայ:  
Մասնաւոր սեփականութեան անհետանալով, կանհե-  
տանան և դասակարգերը, այն ժամանակ չեն լի-  
նի ոչ հարուստներ և ոչ աղքատներ, ոչ սոցեւական-  
ներ և ոչ հասարակ մահկանացուներ, ուրեմն կլե-  
րացւի նաև անհավասարութիւնը: Կմնայ միմիայն



տական աշխարհում կկերացեն աղքատութիւնն ու սոփո, որոնք առաջանում են ոչ թէ նրանից, որ հացը կամ միւս անհրաժեշտ մթերքները չեն բաւականացնում բոլոր մարդկանց, այլ որովհետեւ այժմ գոյութիւն ունի մարդկանց մի ամբողջ դասակարգ— կալւածատէրեր, ձեռնարկողներ, վաճառականներ,— որ օգտւելով ժողովրդի դժբաղդութիւնից, բարձրացնում են դները, անբերրիութեան դէպքում, դիտմամբ այդ անբերրի աեղերը քիչ հաց են ուղարկում, որպէսզի այնտեղ թանգ դնով ծախւի: Այն ժամանակ կանխեստանան նաև սոսկալի՝ որպէս բանւոր դասակարգի, նոյնպէս և բոլոր աշխատանք ունեցող մարդկանց համար՝ նգնաժամերն ու գործադրութիւնը, որոնք արտադրութեան ներկայ եղանակի ծնունդն են: Ինչին է ծառայում ամբողջ ժամանակակից արտադրութիւնը.— առևարին: Իւրաքանչիւր կալւածատէր, գործարանատէր, արհեստաւոր, արտադրում է ոչ թէ սպառելու, այլ վաճառելու համար: Նրանցից ամեն մէկը հողում է ոչ թէ հասարակութեան օգտի, այլ իր զրպանի շահի համար, այդտեղից էլ ծագում է այդ մրցութիւնն ու թրշնամութիւնը մարդկանց մէջ: Կօմմունիստական հասարակութեան մէջ տեղ չեն ունենայ ոչ մրցութիւնը և ոչ շարչիութիւնը, որովհետեւ մարդիկ կարաադրեն ոչ թէ վաճառելու, այլ իրանց սեփական սպառման համար: Ամենը, ինչ որ կարաադրւի, կհամարւի հա-

սարակական սեփականութիւն. ընդհանուր աշխատանքով արտադրած հարստութեան մի մասը կգործադրւի հասարակական կարիքների համար, իսկ միւս մասը աշխատող - քաղաքացիները ընկերական զնահատութեամբ և ընդհանուր համաձայնութեամբ կբաժանեն վրանց մէջ: Որքան շատ հարուստ կլինի հասարակութիւնը, նոյնքան լաւ կտպրեն և նրա առանձին անդամները: Որովհետեւ աշխատանքը կբաւականանայ բոլորին: այդ պատճառով այլևս մարդիկ ստիպւած չեն լինի մէկ մէկու ձեռքից խլել կտոր հացը. ամեն ոք, որ կաշխատի, կօգտւի այն բոլոր շարժարութիւններից և կեանքի ուրախութիւններից, որ այժմ մասչելի են միմիայն հարուստներին: Ինքն բոտ ինքեան հասկանալի է, որ աշխատանքի բոլոր տեսակները կաշխատեն այնպիսի հիմքերի վրայ դնել, որ նրանք առողջարար և դիւրին լինեն: իսկ որովհետեւ աշխատելու են բոլորը, այդ պատճառով ամեն մէկին աշխատանքի քիչ բաժին կընկնի: Դրան կօղնեն և մեքենաները, որոնք մեծ չափերով գործածութիւն կըզտնեն, և դիտութիւնը, որի օգնութեամբ մարդու իշխանութիւնը բնութեան վրայ աւելի կմեծանայ: Մասնաւոր սեփականութեան անհետանալով, կանխեստանան և դասակարգերը. այն ժամանակ չեն լինի ոչ հարուստներ և ոչ աղքատներ, ոչ աղնւտկաններ և ոչ հասարակ մահկանացուներ, ուրեմն, կլեքացւի նաև անհաւասարութիւնը: Կմնայ միմիայն

խերի և տաղանդի անհաւասարութիւնը և էթէ որևէ մէկը հասարակութեան առանձին չարգանքը կլիայէի, այդ ոչ թէ նրա համար, որ նրա հայրը հարուստ մարդ էր, կամ պատր պղնձական, այլ որովհետև նրա մատուցած ծառայութիւնները մեծ են հասարակութեան և ընկեր-աշխատաւորների վերաբերմամբ:

Այսպէս ուրեմն, ժամանակակից բոլոր անարգարութիւններին և թշւառութիւններին վերջ դնելու համար—առաջարկուած էր. 1) մասնաւոր սեփականութիւնը փոխարինել հասարակական կամ կոմունիստական սեփականութեամբ, 2) մտցնել հասարակականացրած միասեղի աշխատանք, և 3) փոխանակ վաճառելու համար արտադրելու, մթերքները պատրաստել հասարակական և անհատական սպաւման համար:

Որքան էլ նշմարիտ թւային այդպիսի չեղաշրջում առաջարկողների դատողութիւնները, որքան էլ զրաւիչ լինէր կոմունիստական հասարակութեան պատկերը, բայց նրանց այդ առաջարկութիւնները ներկայանում էին որպէս դատարկ ցնորքներ: Մի՞թէ հնարաւոր է չեղաշրջել աշխարհը, փոխել նրա բոլոր կարգերը, մարդկային բոլոր շարքերութիւնները: Վերջապէս ի՞նչ միջոցներով հասնել այդ նպատակին: Այս հարցի պատասխանը ոչ ոք չէր տալիս: Փորձում էին մաքրասիրութեան հրաւիրել թա-

ղաւորներին: Փորձու՞մ էին համոզել կապիտալիստներին և սեփականատէրերին մեղմացնելու իրանց կարծրացած սրտերը՝ ժողովրդի տանջանքների մասին պատմւածքներով: Նրանցից աւելի փափկասիրտները՝ արձագանք էին տալիս դրանց, զոհարելով իրանց հարստութեան մի մասը աղքատներին, բայց վաստակն ու չարչիութիւնը չէին ընդհատուած և կեանքը ընթանում էր իր ուղիով: Ոմանք աղքատանում էին, տանջուած, չարչարուած, միւսները վաստակուած, հարստանում և գւարճանում, իսկ նոր կոմունիստական հասարակութիւնը, որ շերտ կերպով քարոզուած էին առաջին սօցիալիստները, ոմանց թւում էր մի դատարկ խաղ, իսկ միւսներին—ցանկալի, բայց անհասանելի մի ցնորք:

Եւ հէնց այստեղ հնչեց Կարլ Մարքսի կարող ձայնը, որ մարդկութեանը ցոյց տւեց այն ուղիղ ճանապարհը, որը նրան անպայման տանելու է դէպի ընկերական աշխատանքի, միութեան և հաւասարութեան թաղաւորութիւնը: Սօցիալիզմը—մի երազ, մի ցնորք չէ, ինչպէս մտածուած են շատերը, այլ կենսական ըկալ անհրաժեշտութիւն: Ինչպէս բրնձութեան մէջ ամեն ինչ ենթարկուած է որոշ օրէնքների, նոյնպէս և հասարակական կեանքը ղեկավարուած է իր առանձին օրէնքներով: Բաւական չէ մարդկանց բարի կամքը՝ դոջութիւն ունեցող կարգերը և շարքերութիւնները փոխելու համար. ո՛չ—զրա համար հարկաւոր է, որ կեանքը ինքը իր ծոցում ծնէ նոր

կազմի սաղմերը: Որքան էլ մարդիկ քարոզեն սօցիալիստական կարգերի օգտակարութեան, յարմարութեան և շահաւէտութեան մասին, բայց այդ կարգերի իրականացումը անհնարին է, եթէ գոյութիւն չունեն այն կենսատպացմանները, որոնք սօցիալիստական կարգերին անցնելը զարժնում են— ոչ միայն ցանկալի, այլ նոյն իսկ անխուսափելի: Իսկ այդ պայմանները, ինչպէս ցոյց աւեց Մարքսը, ոչ միայն արդէն կան, այլ և մշտապէս աճում և զօրանում են: Ինչուր եւ կարծում անտեղեակ մարդիկ, թէ բոլոր տնտեսական կարգերը, մարդկային բոլոր շարաբերութիւնները, օրէնքները, իրաւունքներն ու սովորութիւնները մի անգամ ընդ միշտ սահմանաւած են անէր. Աստուծոյ Ընդհակառակը, նրանք չափազանց փոփոխական են, և մասաւանդ փոփոխութիւնների ենթակայ են տնտեսական, էկոնոմիկական շարաբերութիւնների ձևերը: Այն ինչ հէնց նրանք, այդ էկոնոմիկական շարաբերութիւնները և գլխաւորապէս արտադրութեան եղանակը, ամենից շատ են ազդում մարդկային կեանքի ու կարգերի վրայ: Նրանց են յարմարւում օրէնքները, նրանցից կախումն ունեն բարքերը, սովորութիւնները և մինչև իսկ երկրի կառավարութեան եղանակը: Ոչ մի օրէնքով չեն կարող արգելել, որ մարդը չհամարձակի հարստանալ ուրիշի աշխատանքով, որ հարուստը չհնչէ, չհարստահարէ չունեւորին: Բայց եթէ իրականանար սօցիալիստական կազմը, եթէ ոչ մի

մասնաւոր մարդու ձեռքում չըտնէր արտադրութեան գործիքները և ամեն ոք կարողանար ստանալ այն, ինչ որ աշխատում է— այն ժամանակ կանհեաւանար ամեն մի ճշում ամեն մի հարստահարութիւն: Եթէ փոփոխւում են այն ձևերը, որոնցով մարդիկ ձեռք են բերում իրանց կեանքի համար անհրաժեշտ իրերը (արտադրութեան պայմանները), փոփոխւում են նրանց հետ նաև օրէնքները, բարքերը և նոյն իսկ մարդկանց հասկացողութիւնները \*):

Այդ բանը հաստատում է մարդկութեան ամսրոյ պատմութիւնը: Այս պատճառով այնքան կարևոր չէ սօցիալիստական կարգերի օգտակարութեան քարոզը, որքան անհրաժեշտ է դիտենալը, թէ արդէ՞ օր իսկապէս մեզ շոյապարտող տնտեսական կեանքում հէնց այժմեանից արդէն ծնունդ են առնում սօցիալիստական կարգերը: Եւ եթէ այո— ապա պէտք է ամեն կերպ նպաստել, որ սօցիալիզմի սաղմերը զարգանան և ամրանան: Կփոփոխւեն տնտեսական

\*) Տնտեսական պայմանները ազդում է մ նոյն իսկ մարդու մտածողութեան, նրա հայեացքների ու հոգեկան գրութեան վրայ: հարուստները, պսպէս կոչւած, բուրժուաները բոլորովին տարբեր հասկացողութիւններ, ճաշակ ու հակումներ ունեն, քան պրօլետարները: Այս երևոյթը, որ ընդգծել է Մարքսը, շատ էական է և մարդկային ամբողջ պատմութեան զմեծ դեր է խաղում:

պայծանները—կրփօխւի և ծարդկանց մնացեալ կեանքը: Իզուր են կարծում ոմանք, թէ «այսպէս է եղել առաջ», ուրեմն այսպէս էլ կլինի և՛ ապագայում: Հեռաւոր անցեալում ծարդիկ չգիտէին, թէ ինչ է անհաւասարութիւնը, ինչ է աղքատութիւնը կամ հարստութիւնը: Ունեցածքը, հողը—բոլորը ընդհանուր էր, ամեն ինչ պատկանում էր ոչ թէ առանձին անհատներին, այլ ամբողջ տոհմին: Իեւ այժմ էլ կան վայրենիներ, որոնք պահպանել են այլ անսակ չարաբերութիւնների մնացորդները: Շատ աւելի ուշ միայն աւելի ուժեղները սկսեցին ճնշել թուլերին, սեփականացնել նրանց հողը, ունեցածքը, երեւան եկաւ անհաւասարութիւնը և ծարդկութիւնը նաև աչեց մարդկանց բաժանումը՝ ունեւորների և չունեւորների:

Շատ աստիճաններ է անցել մարդկութիւնը, շատ տեսակ կարգեր է նա ճանաչել, իմացել է և ստրկութիւն, և ազատ աշխատանք, և հորստութիւն, մինչև որ սահմանել են ներկայ կապիտալիստական չարաբերութիւնները իրանց սոսժանելի վարձու աշխատանքով: Ճիշտ է, առաջ էլ աշխատաւորը մարդը մի առանձին լաւ կեանք չէ ունեցել, բայց նա երբէք չէ ճաշակել այնպիսի դառնութիւն, ստորացում, աղքատութիւն և իրաւագրկութիւն, որպիսին ճաշակում է նա այն ժամանակից, երբ ամէնուրեք տարածւեցին գործարաններն ու զաւօղները,

այսինքն երբ հաստատւեց արտադրութեան այսպէս կոչւած խոշոր կապիտալիստական սխառէմը: Օրէցօր աւելի ու աւելի թւով մարդիկ են աղքատանում, քայքայւում և բնկնում պրօլետարիատի շարքերը, պրօլետարիատի, որ ապրում է աշխատաւոր մեղքերի վաճառումով: Ինքնուրոյն արհեստաւոր-կաղմարարը, երկաթագործը, կօշկակարը և այլն—անգօր է դիմանալու խոշոր-գործարանային արտադրութեան ճրջմանը. նա ձգում է իր արհեստը, որ այլևս նրան չի կերակրում և շտապում է դէպի գործարան: Փոքրիկ խանութատերն այս ու այն կողմն է ընկնում, որպէսզի կարողանայ մի կերպ գոյութիւն պահպանել ահագին երկարկանի և բազմահազար ապրանքով լի կանոնթի կողքին, բայց վերջ ի վերջոյ նա էլ քայքայւում է և հողին չարութեամբ լրջւած դնում է աշխատանք որոնելու նոյն իրան անելի, այդ խոշոր խանութում: Գիւղացին, վերջապէս, նա էլ իր վրոյց գրում է կապիտալիզմի լուծը. նա հող չի ունի, միմիայն հողով չի կարող կերակրուել, բայց նա պարապում էր նաև տնայնագործութեամբ, մինչև որ գործարանը իր արտադրութիւնների աժանութեամբ չէր ընկնել նրա ապրանքը:

Գիւղացին էլ ստիպւած է լինում թողնել իր հողի կտորը և սիրար դառնութեամբ լի վարձել կամ կալւածատիրոջ մօտ և կամ շտապել քաղաք աշխատանք նարելու: Գիւղը պատարկւում է, թուր-

վորդը աղքատանում, սկսում է սովը սովի յետևից՝  
 Հաղարաւոր զործաղուրիներ, մէկ-մէկու ձեռքից խը-  
 լելով, իջեցնելով իրանց բանւորական ձեռքերի զինը,  
 ի զուր աշխատանք են որոնում: Իսկ կապիտալիստ-  
 ների համար այդ դրութիւնը ձեռնառու է—որքան  
 քիչ է բանւորների օրավարձը, ուրեմն այնքան օգուտ  
 նրանց, որքան արագ են աճում նրանց կապիտալները,  
 նոյնքան կարող ու հզոր են դառնում իրանք: Գնա-  
 լով աւելի ու աւելի է սրւում մարդկանց երկու  
 թշնամի բանակների բաժանումը—կապիտալիստ-ա-  
 փականատէրերի և սրբօրէտարների, և այնքան աւելի  
 չարութիւն է կուտակւում մարդկանց սրտերի մէջ:

Արդեօք այդ կարգերը, երբ փնայով աղքատա-  
 նում է ամբողջ ժողովուրդը, իսկ հարստանում միայն  
 սեփականատէրերի մի փոքրիկ խումբ, կորուստ  
 չեն սպառնում ամբողջ մարդկութեանը: Ո՞չ  
 — պատասխանեց Մարքսը — այն կարգերը  
 որ այժմ սահմանւել են բոլոր առաջաւոր երկրնե-  
 րում, անկասկած, սոսկալի և անարդար են, բայց  
 նրանց քննելիս չպէտք է զննրատել միմիայն նրանց  
 մութ կողմերը: Նրանց մէջ կայ և լուսաւոր մի բան:  
 Ո՞րն է ամենատեղական և կարեւոր պայմանը՝ նոր հա-  
 սարակական կազմին անցնելու համար: Միտտեղի  
 պլանսօմեր աշխատանքի կազմակերպութիւնը՝ հօկա-  
 սկան արհեստանոցներում իրանց խոշոր կատարե-  
 լագործւած մէքենաներով, որոնք աշխատանքը ա-

ւելի արագացնում և աւելի բեղմնաւոր են  
 դարձնում: Բայց չէ՞ որ այդ երևոյթը ար-  
 դէն այժմ էլ անպայման դոյութիւն ունի, արտա-  
 դրութեան որ երւոյն էլ որ վերցնելու շինենք, ամեն  
 տեղ կնկատենք, որ աշխատատեղների մի ամբողջ  
 խումբ մեքենաների օգնութեամբ դործարանում միա-  
 տեղ արտադրում են այն, ինչ որ առաջ անհա-  
 տական աշխատանքով իր տանը պատրաստում էր  
 առանձին անհատը—չուրհակը, մանողը և այլն: Եւ  
 որքան հաստատւում է մեքենայական արտադրու-  
 թիւնը, որքան դուրս է վճարւում նա մարդու առան-  
 ձին, անհատական աշխատանքը, նոյնքան լայն է տա-  
 րածւում միատեղի, հասարակական աշխատանքը, նոյն-  
 քան կենդրոնանում է արտադրութիւնը: Իսկ արտա-  
 դրութեան այդ կենդրոնացումը միեւնոյն ձեռքերում  
 ներկայանում է անհրաժեշտ պայման սոցիալիստական  
 տնտեսութիւն մտցնելու համար:

Որպէն զի հասարակութիւնը հեշտութեամբ և  
 յարմար կերպով կարողանալ կարգադրել արտադրու-  
 թեան գործը, աւելի համաչափ կերպով տանի իր  
 տնտեսութիւնը, զրա համար, ի հարկէ, պահանջւում  
 է, որ տնտեսութիւնը ցրւած չլինի ներկայ խոշոր-  
 կապիտալիստական արտադրութիւնը փայլուն կերպով  
 կատարում է այդ միջոցէ նա չէ, որ միացնում է միև-  
 նոյն ձեռքերում աւելի ու աւելի թւով գործարան-  
 ներ, գլուխներ, արհեստանոցներ, նա չէ, որ միաց-

նում է երկրագործի և գործարանային բանուորի աշխատանքը, նա՝ չէ, որ կապում է քաղաքը գիւղի հետ: Այժմ, երբ ժողովրդի հարստութիւնը միացած է գիշատիչ-կապիտալիստների ձեռքում, այդ կենդրոնացումը գնում է յօդուտ միմիայն սեփականատէրերի և դրանում է, ի հարկէ, ամբողջ չարիքը: Բայց միւսնոյն ժամանակ հէնց հարստութիւնների և արտադրութեան գործիքների, այդ կենդրոնացման մէջ են ծածկւած տպագայ հասարակական կարգերի սաղմերը:

Այդ կարգերի ոյժը հէնց նրա մէջ է կայանում, որ նրանց մէջ չենք հնարեալ մեր պրոֆեսներից, որ նրանք լոյս աշխարհի չեն գալու յանկարծ, առանց այլևայլութեան. ո՛չ համակենցացի այդ նոր ձեերը տանեակ տարիների ընթացքում նախապատրաստում է կեանքը և նրանք բնականաբար բղխում են ներկայ հասարակական պայմաններից:

Մարքսի արժանաւորութիւնը հէնց նրա մէջ է կայանում, որ նա մեր ներկայ վատթար կարգերի մէջ նկատեց լուսաւոր տպագայի ստորք, որ նա ցոյց տուցի թէ ինչպէս ինքը կեանքը, իրանք, մարդկութեան տնտեսական պահանջները տնխուստիելիօրէն տանում են նրան դէպի սօցիալիստական կազմը:

Ճէնց այժմ էլ կարելի է մատնացոյց անել սօցիալիստական կարգերի մի քանի սնդմերի վրայ. օրինակ պօստի, երկաթուղու, դպրոցների, հիւանդա-

նոցների և այլն նման հասարակական և տնտեսական կեանքի կարևոր կողմերի յանձնումը պետութեան ձեռքը: Սկզբում, մի քանի հարիւր տարի առաջ, պետութիւնը երբէք իր պարտականութիւնը չէր համարում դպրոցներ, հիմնելը, հաղորդակցութեան ճանապարհների մասին հոգալը և այլն. այժմ արդէն այդ բոլորը մտել են նրա պարտականութիւնների շարքում: Բայց որովհետև այժմ պետութեան գլուխ են կանգնած բուրժուալիայի ներկայացուցիչները, այդ պատճառով դործը, ի հարկէ վնասում է իսկ այն ժամանակ, երբ պետական իշխանութիւնը կրդսնէ ժողովրդի ձեռքում, նա նոյնպէս հեշտութեամբ կրկարգադրէ իր հայրենիքի կեանքի բոլոր կողմերը, ինչպէս ներկայի համար բնական է դպրոցներ հիմնելը, կամ պոստը կառավարելը:

Ուրեմն ի՞նչն է անհրաժեշտ պայմանը սօցիալիստական կազմի իրականացման համար:

Կապիտալի, հողի և արտադրութեան մասնաւոր սեփականութեան ոչնչացումը: Բայց ի՞նչ էք կարծում, ինքը կապիտալիստական աշխարհը նենգութեամբ գերեզման չէ՞ փորում մասնաւոր սեփականութեան համար:

Նայեցէք թէ ի՞նչ է անում ինքը կապիտալիստական արտադրութիւնը. մի կողմից նա ստեղծում է միատեղի հասարակականացրած աշխատանքը, առևտուրը լայնացնում և նրան համաժողովրդական ու նոյն

իսկ համաշխարհային անտեսական զործունեութիւն է դարձնում\*) , միւս կողմից ամբողջ փաստակր, բոլոր կապիտալները կրկին թողնում է մասնաւոր սեփականատէրերի ձեռքերում, ուրիշ խօսքով, արտադրութիւնը արդէն աշխատանքից հասարակականանում է, իսկ սպառումը, այսինքն արտադրածի բաժանումը, չէ կանոնաւորւում, չէ սահմանւում հասարակութեան կողմից, այստեղ տէրերը նոյն զիշատիչ-կապիտալիստներն են և ոչ թէ հասարակութիւնը, ինքը՝ ժողովուրդը: Ճէնց այդ երևոյթի մէջ է թաղանթ ամբողջ չարիքը և կապիտալիզմի կորստեան ամբողջ անխուսափելիութիւնը: Մեքենայական ար-

\*) Սկզբում սոււտուրը տարւում էր ամենահասարակ կերպով, ինչպէս և այժմ գիւղերում, ամեն ոք ինչ որ արտադրում էր, ինքն էլ շուկայ էր բերում և հէնց, այստեղ գրացիները միմեանցից զնում, փոխանակում էին իրանց ապրանքները: Այժմ սոււտորով պարտաւում են, ինչպէս յայտնի է, ոչ թէ նրանք, որ քաղել, հնձել, կամ պատրաստել են ապրանքը (հաց, քաթան, կաշի և այլն), այլ առանձին մարդիկ — փանառականները կամ առևտրականները: Սրանք ապրանքը մի տեղից միւսն են տեղափոխում՝ օրինակ, այն ինչ որ պատրաստած է Ռուսաստանում տանում են Ամերիկա, Անգլիայից Չինաստան և այլն: Այսպիսով նրանք իրանց առևտրական յարաբերութիւններով կարծես հիւստում են միմեանց հետ ոչ միայն քաղաքն ու գիւղը, այլև մի երկիրը միւսի հետ:

տադրութիւնը հնարաւորութիւն է տալիս անհամար քանակութեամբ զանազան ապրանքներ արտադրելու, նայց այդ հարստութիւնների տէրերը, որպէս մասնաւոր սեփականատէրեր, անգոր են հաշւելու հասարակութեան իսկական պէտքերը և հարստանալու յետևից ընկած, շարունակ լցնում են շուկան ապրանքներով, որը աղքատացած, նոյն կապիտալիստներից կողոպուտած ժողովուրդը հնարաւորութիւն չունի զնելու, եթէ նոյն իսկ մեծ կարիք ունենայ նրանց: Ինչո՞ւ որքան սուր և լուրջ են լինում հզնաժամերը, բանկերի սնանկութիւնները, զործարանատէրերի քայքայումներն ու բանւորների զործազրկութիւնը, նոյնքան մարդկութիւնը ակներև կերպով համոզւում է, որ ինքը հասարակութիւնը պէտք է իր ձեռքը վերցնէ արտադրութիւնը և հողաց նրա համաչափ կառավարելու մասին, պատրաստ է այն տեսակ ապրանք և այն չափով, որ իսկապէս հարկաւոր է կարիքները լրացնելու համար:

Կիցայ մի օր, երբ ծանր և անտանելի երկպառակութիւններից և անտեսական ցնցումներից յետոյ մարդկութեան առաջ կրկանգնի կամ ոչնչանալու և կամ նոր ուղի ընտրելու, այսինքն բոլոր անտեսական յարաբերութիւնները նոր հիմքերի վրայ զնելու հարցը: Եւ այն ժամանակ հասարակութիւնը վերջապէս ոտք կընէ սօցիալիզմի շէմքը...

Կայ մի հանգամանք ևս, որ արագացնում և

հեշտացնում է այդ անցքը՝ գէպի սօցիալիզմը. արտապրութեան գործիքների սեփականատերերի թւի պակասելը և բանւոր դասակարգի թւի չափազանց անեցողութիւնը: Հասարակութեան բաժանումը երկու հակադիր բանակների—բուրժուա-սեփականատէմերի և չունեւոր պրօլետարներին—գնալով աւելի ուրոշ է դառնում: Մկրտում այդ երկու դասակարգերի միջև ընկած էին զանազան միջանկեայ խաւեր—ձանր վանառականներ, ձանր գործատէրեր, արհեստաւորներ, խանութպաններ և այլն:

Խոշոր կապիտալիստական արտապրութիւնը, հիմնւած լինելով ձրցութեան վրայ, պահանջելով խոշոր կապիտալներ և մեծ շրջանառութեան ընդունակութիւն, անբաղար քայքայում է միջին դասակարգը՝ նրան ևս ձգելով պրօլետարիատի շարքերը: Որքան էլ ծանր լինի իրերի այժմեան այդ դրութիւնը, բայց նա աւելի դիւրացնում է գէպի սօցիալիզմը տանող ուղին. որքան քիչ լինեն սարգերը, այնքան հեշտ կլինի նրանց ոստայնների քանդելը, այնքան դիւրին կլինի նրանց ձեռքում կենտրոնացած ժողովրդական հարստութիւնների խլումը:

Խոշոր կապիտալիստական արտապրութիւնը, վերջապէս, հետզհետէ աւելի ու աւելի աւելորդ է դարձնում պ. պ. կալուածատէրերին, գործարանատէրերին և միւս ձեռնարկողներին. սկզբում, երբ արտապրութիւնը կատարւում էր արհեստների սխառ-

մով, գործատէրը հարկաւոր էր արհեստանոցում, առանց նրան գործը չէր կարող առաջանալ—նա էր կարգադրողն ու սովորեցնողը: Իսկ այժմ մի թէ անհրաժեշտ է գործարանատիրոջ ղեկավարութիւնը: Բոլորովին ոչ: Յանախ բանւորները իրանց տիրոջը խելի աչքով էլ չեն տեսնում: Գործարանի կառավարութիւնը, կարգ ու կանոնը—բոլորն ընկած են վարձկանների—կառավարիչների, ինժեներների, վերակացուների և գործակատարների վրայ: Եթէ մի գեղեցիկ օր միանգամից մեռնէին բոլոր գործատէրերը, արտապրութիւնը կարող էր առանց մի բոպէ դադարելու շարունակել իր գործունէութիւնը. այն ինչ էթէ ամբողջ աշխարհի բանւորները նոյն իսկ կէսօրով համերաշխութեամբ դադարէին աշխատելուց, կանգ կառնէր ոչ միայն արտապրութիւնը, այլ և ամբողջ կեանքը: Օրինակի համար. հեռու գնալ հարկաւոր չէ. չիշենք 1905 թւին Ռուսաստանում տեղի ունեցած ընդհանուր գործադուլները:

Ուրեմն կապիտալիզմը ինքը, հակառակ իր կամքին, մարդկութիւնը առաջնորդում է գէպի սօցիալիզմը և ինքն էլ հեշտացնում է նրա անցումը գէպի սօցիալիզմ...

Այդ բոլորն այդպէս է, կասէք դուք, բայց չէ՞ որ ինքն իրան չէ կատարւելու այդ կարեւոր չեղաշրջումը. պէտք է լինի մէկը, որ զբաղւի հասարակութեան վերակազմութեամբ, թէ ոչ: Ո՞վ պէտք է



լինի: Յամենայն դէպս ոչ պ. պ. կապիտալիստներն ու սեփականատէրերը. նրանց վրայ յոյս դնել չի կարելի—նրանք շատ զոհ են ներկայ կարգերից և այդ պարտնառով էլ ամուր կպած են նրանցից: Հապա օփ; բանւոր դասակարգը: Բայց չէ որ նա մոռացած է ենշւած ու անգոր: Այդ հիշտ է, բայց միայն մտ, սամբ: Մթթէ ենշման, ստրկութեան և հարստահարութեան հետ միասին չէ անում բանւորների սրտերի մէջ դժգոհութիւնը, ատելութիւնն ու բողոքը դէպի իրանց հարստահարողները: Եթէ կապիտալիստներին կարելի է համեմատել ուրիշի արիւնք ծծող սարդերի հետ, պրօլետարներին երբէք չի կարելի անգոր ու հնազանդ ճաններ անւանել: Պրօլետարիատը ուժեղ է հէնց նրանով, որ նա ընդհանուր միատեղի արտադրութեան պրօցէսի շնորհիւ կազմակերպւում է, որ ինքը կեանքը նրա մէջ զարգացնում է ընկեմականութեան, համերաշխութեան «բոլորը մէկի համար» ոտքի կանգնելու պատրաստակամութեան ըզգացմունքները... Մենք վերևում ասացինք, որ անասական պայմանները ազդում են մարդկանց հոգեկան գրութեան վրայ, ստեղծում են նրանց հասկացողութիւններն ու համոզմունքները: Իր անդադար աշխատանքով պրօլետարը ստեղծում է բոլոր հարստութիւնները, բոլոր բարիքները, որոնք զարգարում են կեանքը, այն ինչ ինքը ապրում է կիսաքաղց գրութեան մէջ, զուրկ անհրաժեշտ բոլոր բաներից. նա

մաշում է իր բոլոր ուժերը, փչացնում է իր երիտասարդութիւնը և այդ բոլորը նրա համար, որպէսզի լցնէ կապիտալիստի զբաւանք:

Մի կողմից անում է անողոք աղքատութիւնը, միւս կողմից անորակելի շքեղութիւնը... Բնական է, որ բանւորների սրտում բացի ատելութիւնից ծագում է և մի որոշ ցանկութիւն—փշրել կապիտալիզմի շղթաները, աշխատել, բայց վայելել այդ աշխատանքի պտուղները: Սօցիալիզմի իդէալը անդիտակցաբար ծագում և հասունանում է բանւորների սրտերում և մղում է նրանց դէպի անխնայ կռիւ կապիտալիզմի դէմ: Իսկ այդ պայմաններում նաև միասին աշխատանքը, համերաշխ զործելու և ընդհանուր շահերը պաշտպանելու սովորութիւնը—այս բոլորը բանւորներին դաստիարակում, չարմարեցնում են սօցիալիստական հասարակութեան համար, որտեղ առաջին տեղը բռնելու է ոչ թէ մրցութիւնը, այլ համերաշխութիւնն ու միութիւնը այնպիսի մարդկանց, որոնք կարողանում են ընդհանուրի օգուտը դերադասել անհատականից, մասնաւորից: Օրինակ, կարող են լինել բանւորների զործադուլները, երբ ընդհանուր զործի համար մարդիկ կամաւոր կերպով դատապարտում են իրանց և իրանց ընտանիքներին զրկանքների, սովի և աղքատութեան...

Բայց ի՞նչպէս պէտք է պրօլետարիատը հասնի սօցիալիստական կարգերի: Ի՞նչ նանսպարհով: Դրա

համար հարկաւոր է որ նա նախ և առաջ գիտակցելով ամբողջ բանւոր դասակարգի շահերի ընդհանրութիւնը, կազմակերպւի և համերաշխ կռիւ սկսէ հին աշխարհի դէմ:

Նարկաւոր չէ զբաււել այն լոյսերով, թէ պրօլետարիատի նպատակը, որքան էլ պարզ, որքան էլ բաւ լինի, հասկանալի և ցանկալի է ուրիշ որեւէ դասակարգի համար: Պրօլետարիատը միակ դասակարգն է, որ զուրկ է սեփականութիւնից, նա միակն է, որ դէպի սօցիալիզմն անցնելիս ոչինչ չունի կորցնելու «բայի իր շղթաներից», բայց որը ձեռք է բերելու ըստ Կարլ Մարքսի («ամբողջ աշխարհը») ... Մնացած բոլոր դասակարգերը ամեն կերպ կաշխատեն արդէք լինել բանւորների նպատակին, ոմանք ղյժով և սպառնալիքով, ոմանք էլ «քաղցր խօսքերով» ... Շատ անգամ բուրժուազիան փշրանքներով կ'փորձէ կերակրել բանւորներին, միայն թէ նրանք հանդստանան, միայն թէ ձուռնան իրանց վերջնական նպատակը: Մի՞թէ մենք հէնց այժմ էլ չենք տեսնում, թէ որքան առատ է մեր բուրժուազիան խոստումներով, հէնց որ հնչում են պրօլետարիատի հզօր պահանջները: Բայց բանւորները չպէտք է զբրաււեն նրանց խոստումներով, չպէտք է ընկնեն կապիտալիստների ծուղակը:

Ընկերներ, վերցրէք, խլեցէք բուրժուազիայի ձեռքից այդ երկչոտ խոստումները, որ նա առանց

մտածելու տալիս է ձեզ երկիւղի ըրակներին, բայց երբէք զբանցով մի բաւականանաք, երբէք մի հանդրատանաք: Յիշեցէք, որ ինքը կեանքը ձեր կողմն է— ձեր վերջնական յաղթանակը սպահովւած է:

Այժմ մենք կարող ենք պատասխանել ներկայ յօլւածի սկզբում դրած հարցին— ովքե՞ր են սօցիալ-դէմօկրատները: Սօցիալ-դէմօկրատները— այդ դուք էք ընկեր բանւորներ: Այդ այն բանւորներն են, որոնք ըմբռնելով Մարքսի ուսմունքը, գիտակցաբար միացել են ընդհանուր-պրօլետարական ազատարար շարժանքի, շարժում, որ տարածւել է ամբողջ աշխարհում, շարժում, որ միացրել է բոլոր երկրների պրօլետարներին: Սօցիալ-դէմօկրատները— այն բանւորներն են, որոնք խառնելով իրանց շարքերը, անողոք կռիւ են յայտարարել կապիտալիզմին, որոնք քայլ առ քայլ նւանում են բանւոր դասակարգի համար աւելի ու աւելի լայն իրաւունքներ ու տանելի կենսապայմաններ, իսկ ամբողջ մարդկութեան համար նոր, աւելի արդար կարգեր:

Ծանր նանապարհ ունի անցնելու բանւոր դասակարգը, նախ քան իր այդ նւիրական նպատակին հասնելը, նախ քան բուրժուազիայի չամառութիւնը վիշրելը: Բայց նրա մխիթարութիւնը մշտապէս պէտք

է լինի այն զիտակցութիւնը, որ պրօլետարիաար  
կուռում է ոչ միայն իր ազատութեան, այլև բոլոր  
սպազայ սերունդների Էրզանկութեան և բարօրու-  
թեան համար:

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]*

*[Faint handwritten notes or markings]*

ՀՀ ԱժՏԱԿԻՆ ՊՐԱԴԱԿՐԱՆ



NL0792494

1

1731